ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 0512-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 95 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՆՎԵԼ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,ԱՆԱՀԻՏ ԿՈԼՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,ՍՅՈՒԶԻ ՄԱՆՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,ՔՆԱՐԻԿ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՐԵՆ ՄԱՆՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Մանվել Սուրենի Հարությունյանի 04.03.2024թ. թիվ 1453 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0107-0006 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Մանվել Սուրենի Հարությունյանի /ծնված՝ 25.04.1952թ./,Անահիտ Կոլյայի Հարությունյանի/ծնված՝ 22.08.1962թ./,Սյուզի Մանվելի Հարությունյանի/ծնված՝ 09.07.1983թ./,Քնարիկ Մանվել Հարությունյանի /ծնված՝ 17.01.1987թ./ և Սուրեն

Մանվելի Հարությունյանի /ծնված՝ 22.09.1988թ./ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղ 04-059-0107-0006 կադաստրային ծածկագրում գտնվող 1300.0քմ մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 178.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց՝ սեփականության իրավունքով:

2.Վերականգնել Մանվել Սուրենի Հարությունյանի,Անահիտ Կոլյայի Հարությունյանի,Սյուզի Մանվելի Հարությունյանի,Քնարիկ Մանվել Հարությունյանի և Սուրեն Մանվելի Հարությունյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0107-0006 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 1478.0 քմ օրինական հողամասի վրա 1988թ. կառուցված 11.6 քմ մակերեսով լոգարանի, 1988 թվականին կառուցված 13.3 քմ մակերեսով թոնրատան և 1988 թվականին կառուցված 53.7 քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ:

3. Մանվել Սուրենի Հարությունյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0107-0006 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարդարապատ գյուղ, 2-րդ փողոց, 95:

4. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**

2024 թ. ապրիլ 15
ք. Արմավիր